ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆՆ ՈՒ ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐ

Վան-Վասպուրականում 19-րդ դարի երկրորդ կեսին իրենց ծավալած կրթական-լուսավորչական և քարոզչական վիթխարի, հուժկու գործունեությամբ առանձնանում են երկու այնպիսի հզոր կամքի տեր անհատներ, ինչպիսիք են Մկրտիչ Ա Խրիմյանն ու Մկրտիչ Փորթուգալյանը: Նրանք իրենց գործունեությամբ պատրաստեցին ազգաշունչ մտքառողների մի նոր սերունդ՝ էապես նպաստելով Վանում Արմենական կուսակցության կազմավորմանը: Խրիմյանն ու Փորթուգալյանը, զգալով ժամանակի թելադրականը, անձնազոհ կերպով նետվեցին քաղաքական պայքարի մեջ՝ իրենց անձը նվիրաբերելով գավառահայության շրջանում կրթություն և լուսավորություն տարածելու անչափ դժվարին ու վտանգներով հղի գործին, քանզի սուլթանական կառավարությունն այդ կարգի բոլոր ձեռնարկումները դիտում էր որպես թշնամական:

Նրանք քաջ գիտակցում էին, որ ժողովուրդները մարտում և մարտնչում են ոչ միայն սրով, այլև գրչով: Եվ մինչև ֆիզիկական նակատամարտը, ժողովուրդները նակատամարտում են հոգևոր առումով, գրով և գրչով, դպրությամբ և մշակույթով: Մինչև իրենց կյանքի վերջին ակնթարթը Փորթուգալյանն ու Խրիմյանը հոգևոր տարածքի վրա մարտնչեցին հայ ժողովրդի ազատության և անկախության համար:

Խրիմյան Հայրիկը ծնունդով վանեցի էր, Վասպուրական աշխարհի հող ու ջրի զավակ: Նա ծնվել է 1820 թ. ապրիլի 4-ին, Վանի Հանկոյսների թաղում: Բնությունից օժտված մանուկը գրել ու կարդալ սովորեց իր հորեղբոր՝ կտավագործ վարպետ Խաչատուրի մոտ: Հետո ուսումնատենչ պատանին անցավ ինքնակրթության ու ինքնանանաչման մեծ ճանապարհ:

1841 թ. Խրիմյանը հոգևոր ծառայության անցավ Կտուց և Լիմ անապատներում[1]:

Այնուհետև վերադառնալով Վան, իր ընկերների հետ ամիսներ շարունակ շրջագայեց հայրենի Վասպուրականի բոլոր գավառներում և գյուղերում, խորապես ճանաչեց հարազատ ժողովրդի վարք ու բարքը, ընկալեց նրա ազատատենչ ոգին: Խրիմյանը զգաց արևմտահայության ծանր, տառապալից վիճակի ողջ ողբերգականությունը և պատանի հասակից ուխտեց մարտնչել ստրկացված ազգի իրավունքների և ազատության համար:

Նրա բուռն ազգային-քաղաքական գործունեությունը սկսվեց 1850-ական թթ. կեսերից, սկսվեց բուռն, հուժկու և սրընթաց: Եվ գավառահայության այն ժամանակվա հեղձուցիչ մթնոլորտում «Մի ձայն միայն հնչում էր բարձր ու խրոխտ, այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռության մեջ, հնչում էր մարդկային

[1] Հ. Մ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից /1850-1900/, Ե., 1988 թ., էջ 102:

արժանապատուութեան լիակատար գիտակցութեամբ, առանց բնաւ սողալու, շոյելու, երկրպագելու, առանց բնաւ վարագուրելու Մեծ Համբի՝ ժողովրդի արիւնահոս վէրքերը, հայկական արիւնաներկ ու անիծակուռ դժոխքը»[2]:

Իսկ այդ ձայնը լսվում էր Վասպուրականից, Վարագա բարձունքներից, ուր «... թառել էր Արծիւը գուտենբերգեան մեքենան շալակած... Խրիմեանն էր... հայութեան խիղճը, նրա իմաստի սգաւոր ու ցաւատանջ թարգմանը»[3]:

1855 թ. հունիսից մինչև 1856 թ. կեսերը Խրիմյանը Կոստանդնուպոլսում հրատարակեց «Արծուի Վասպուրական» ամսագիրը, բայց շատ շուտով այն տեղափոխեց Վասպուրական, ուր Վարագա վանքում առաջին անգամ հիմնեց տպարան:

Կ. Պոլսում Խրիմյանը Գում Գափուի Մայր եկեղեցում իր կարդացած քարոզի ժամանակ համարձակություն ունեցավ օսմանյան արքունի վառոդապետ Հովհաննես բեյ Տատյանին դիմելով ասել, թե «Ով արքունի վառոդապետ, քու ամբարած վառոդեդ քիչ մըն ալ հայաստանցի հայերուն տուր, որ գործածենք մեր թշնամիներուն դեմ»[4]:

Վարագա վանքում Խրիմյանը հիմնեց նոր տիպի դպրոց՝ ժառանգավորաց վարժարանը, որի բացումը եղավ 1857 թ. մարտի 1-ին: Սակայն Վարագա վանքում Խրիմյանի բազմաբեղուն գործունեության թագն ու պսակը հանդիսացավ «Արծուի Վասպուրական» հանդեսի հրատարակությունը, որը լույս է տեսել ութ տարի: Այն դարձավ հինավուրց մշակույթ ունեցող Վասպուրականի առաջին տպագիր օրգանը:

Խրիմյանի հրատարակած հանդեսը պատմում էր ժողովրդի ծանր հոգսերի ու ցավերի մասին, ընթերցողին կապում հայրենական սրբությունների հետ, դատապարտում պանդխտությունը: Խրիմյանը խոսք էր բացում համահայկական բնույթի հիմնահարցերի շուրջ՝ ձգտելով այն դարձնել հայության ցավի, վշտի ու բողոքի թարգմանը, հուսադրելով հեռուներում ծվարած հայորդիներին, որ անցնելու են դժնի ու մահաշունչ օրերը և «... թե դարձյալ գարուն եկն ի Հայաստան և ի Վասպուրական երկիր»[5]: Հանդեսի էջերում իշխող ոգին ոչ թե լացուկոծն էր, մորմոքն ու վիշտը, այլ շեշտված անհանդուրժողականությունը հայության ստրկական վինակի հանդեպ, բողոքի և ընդվզումի տրամադրությունների արծարծումը:

Եվ իրավ է, որ 19-րդ դարի 60-70-ական թթ. «Վասպուրականի արծիւը գուցէ միակ յեղափոխական իրողութիւնն էր հայկական հորիզոններում, միակ օրգանը հայրենիքի մէջ, որ նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ, կռուի, ըմբոստացման երաւէր էր կարդում նոր սերունդին»[6]:

1869 թ. Կոստանդնուպոլսի Ազգային ժողովը Մ. Խրիմյանին ընտրեց Պատրիարք: Բայց Խրիմյան Պատրիարքը որքան սիրելի ու հարազատ էր հասարակ ժողովրդին, նույնքան անընդունելի՝ ազգի ցեցերին ու սուլթանական

---

2 Միհ. Վարդանեան, Հայկական շարժման նախապատմութիւն, ժնեւ, 1912 թ., հ. 1, էջ 292:

3 Նույն տեղում:

4 Հ. Անեմյան, Հայոց Հայրիկ, հատ. Ա, Թավրիզ, 1929 թ., էջ 214:

5 «Արծուի Վասպուրական», 1858 թ., թիվ 1, էջ Բ:

6 Միհ. Վարդանեան, նշվ. աշխ., էջ 292-293:

պաշտոնյաներին: Այդ էր պատճառը, որ նրա դեմ սկսեցին կազմակերպված զրպարտանք ու հալածանք սադրել: Խրիմյանը թուրքական կառավարության առջև որոշակիորեն դրեց գավառահայության անտանելի վիճակը բարելավելու և կատարվող բռնությունները զսպելու հիմնահարցը: Սակայն դավադրությունները հետզհետե սաստկացան, և այլևս չտանելով գոր ու մռայլ մթնոլորտը, Մկրտիչ Խրիմյանը ստիպված էր 1873 թ. հոկտեմբերին թողնել ազդեցիկ պաշտոնը և արտասանել «Խոսք հրաժարման» հայտնի ճառը: «Պիտի դառնամ հայրենիքս... վասնզի փորձառութեամբ հասկացայ, որ այս աշխարհին մէջ մարդ մեծ պաշտօնի գլուխ անցնելով կարող չէ այնպէս մեծագործել, ինչպէս իւր և ազգին փափագն է»,- դառնությամբ ասել է նա[7]:

Վանում Խրիմյանի գործունեության երկրորդ արգասավոր շրջանը սկսվեց 1879 թվականից, երբ «... Վանի առաջին սահմանադրական առաջնորդ ընտրվեց 49 երեսփոխանների քվեով»[8]: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում սով էր սկսվել, և Խրիմյանը նշանակվեց Սովելոց հանձնաժողովի նախագահ: Երկու տարվա ընթացքում Խրիմյանը վիթխարի ազգաշեն գործ կատարեց՝ սովի ճիրաններից փրկելով հազարավոր հայերի կյանքը: Սովի վտանգները լրիվ ու լիովին հաղթահարելու և հայ գյուղացուն հողամշակության առաջավոր մեթոդներին ծանոթացնելու նպատակով նա Վարագա վանքում բացեց երկրագործական վարժարան՝ 1880 թ. նոյեմբերի 1-ին:

Խրիմյանը Վանի հողագործական պրակտիկայում փորձեց արմատավորել նոր տեխնիկա՝ «... Եւրոպայէն բերել տուաւ հերկելու, ցանելու, հնձելու և կալսելու գործիքներ, որոնցմէ ուրիշ ագարակատերեր ալ բերել պիտի տային հետզհետէ»[9]:

Իր բազմաբեղուն գործունեության ողջ ընթացքում Խրիմյանը հասարակ ու պարզ կենցաղով, մատչելի ու մարդամոտ բնավորությամբ ձեռք բերեց Վասպուրականի հայության ջերմ սերն ու անվերապահ պաշտամունքը իր անձի նկատմամբ: Փառքը նրան պետք չէր, և նա քնավ չէր գնում փառքի ու փառասիրության հետևից, այլ ամենուրեք, ամեն քայլափոխի լսվող «Հայրի՛կ», «Հայրի՛կ» ջերմաշունչ բացականչությունները էին Խրիմյան մարդուն և ազգային գործչին հիշեցնում, որ ինքը ահավասիկ դարձել է ողջ հայության հոգևոր առաջնորդը և ազգի պայծառ հույսերի մարմնավորողը:

Վասպուրականում Մկրտիչ Խրիմյանի ծավալած վիթխարի գործունեությունը մեկ բառով բնորոշվում է որպես Սխրա՛նք: Այո՛, սխրա՛նք՝ հանուն ազգի ազատության ու գոյատևման, հայրենի ժողովրդի լուսավոր իղձերի կատարման:

Եվ հազիվ թե կարելի է համաձայնվել այն կարծիքին, թե Խրիմյանը «...թերևս ինքն ալ չէր գիտակցէր յեղափոխութեան այն ելևէջներուն, որոնք տեղի ունեցան իրեն սիրելի Վասպուրականի մէջ և կապուեցան իր անունին»[10]:

Խրիմյանը գիտեր իր հայաշունչ-ազգօգուտ գործունեության ուժն ու նշանակությունը, քաջ գիտակցում էր, որ ինքը ցանում է հավաքական ազգային

---

7 Խրիմյան Հայրիկ, Երկեր, ե., 1992 թ., էջ 7:

8 Համ. Երամեան, Ցուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929 թ., հատ. Ա, էջ 116:

9 Նույն տեղում, էջ 176:

10 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, էջ 79:

փոքրիկի սերմերը: Բայց անառարկելիորեն ճշմարիտ է, որ «...Խրիմեանը պիտի համարել ազգային գիտակցութեան տարածման նախահայր, իսկ Մ. Փորթուգալեանը՝ յեղափոխական կուսակցութեանց հայրը»[11]:

Ինքն իրենով մարմնավորելով Վասպուրականի և համայն հայութեան լուսավոր երազներն ու իղձերը, բովանդակ կյանքում մաքառելով համազգային նպատակների իրագործման համար, Խրիմյանը պարզ հոգևորականից վերանեց ազգային հերոսի: Իրավ ճշմարիտ է, որ «...Հայրիկ պատուանունը իւրաքանչիւր ազգի մէջ վիճակում է միայն մէկին»[12]: Թուրքական կառավարության համար այլևս անընդունելի էր դարձել Խրիմյանի հետագա գործունեությունը Վանում, քանզի նրա ներկայությունն իսկ խոռվում էր հասարակական թվացյալ անդորրը և գրգռում թուրքական պաշտոնյաների մոլեգին ատելությունը: Այդ պայքարնավտանգ գործոնը չեզոքացնելու համար նոր կուսակալ Հասան Փաշայի կարգադրությամբ 1885 թ. ապրիլին Խրիմյան Հայրիկը աքսորվում է Վանից:

Վանում միայնակ չէր գործում Խրիմյանը: Նրա ազատասիրական գործն ու գաղափարները լրացրեց, շարունակեց ու նոր մի բարձրության հասցրեց ազգային շարժման ռահվիրա Մկրտիչ Փորթուգալյանը, որը «Սովորական դեմք մը չէ, որ երեւցաւ հայ յեղափոխական հորիզոնի վրայ»[13]:

Մ. Փուրթուգալյանը Խրիմյանի հետ ասպարեզ իջավ, երբ մութ, խավար ու դժնդակ օրեր էին Հայոց աշխարհում: Եվ բռնություններից առավել սոսկալին «...տգիտութիւնը սև թուխս էր նստած հայութեան հոգու վրայ: Լոյսի ոչ մէկ շիւղ, ոչ մէկ ուղեցոյց: Այդ օրերուն ասպարէզ իջաւ ան, երկաթէ մարդը»[14]:

Մ. Փորթուգալյանը ծնվել է հոկտեմբերի 9-ին, Կ. Պոլսում: Հայրը՝ Ռաֆայել Սողոմոնյանը, սեղանավոր էր, որպես ուսումնասեր անձնավորություն հարգված համայնքի կողմից, ուներ բավականին մեծ գրադարան, որից պիտի օգտվեր որդին:

Փոքրիկ Մկրտիչը հանախում է Գում-Գափուի Մայր-Վարժարան՝ ժամանակի լավագույն ուսումնարաններից մեկը, որտեղ դասավանդում էին տեղի առաջադեմ ուսուցիչներից շատերը: Արդեն աշակերտական օրերից Մ. Փորթուգալյանն ապրում է ազգային եղելությունների անդրադարձներով: Դա այն շրջանն էր, երբ հայ ազգային գործիչները խանդավառվել էին ֆրանսիական բուրժուական հեղափոխության ազատասիրական գաղափարներով, հայոց ազգային կյանքի մարգագործման իդեալներով: Բուռն պայքար էր ծավալվել ազգային սահմանադրության ընդունման համար:

1861 թ. Սահմանադրական Մարմինը իր նիստերն էր շարունակում Մայր-Վարժարանի մեջ: Մկրտիչը հուզումով և գաղտագողի հետևում էր այդ ժողովների ընթացքին: Ավարտական վերջին տարում /1862 թ./ Փորթուգալյանը թողնում է վարժարանը և անցնում Սամաթիայի Ս. Սահակյանը: 1863 թ., երբ Բ. Դուռը վավերացրեց Ազգային Սահմանադրությունը, Փորթուգալյանը,

---

11 Նույն տեղում, էջ 80:

12 «Ազատամարտ», թիվ 14, 1993 թ.:

13 Տե՛ս «Գասասուն տարուան աշխատութիւնը», Կ. Պոլիս, 1914 թ., էջ 30:

14 Նույն տեղում, էջ 40:

ավարտելով վերոնշյալ վարժարանը, աշխատում է որպես գրավաճառ-թղթավաճառ, ապա հիմնում սեփական գրատուն-թղթավաճառանոց:

1867 թվականից Փորթուգալյանը նվիրվում է ուսուցչական ասպարեզին: Այնուհետև զգալով հրատարակչական ընկերություն, զբաղվում է գեղարվեստական գրականության թարգմանությամբ:

1863 թվականից մինչև 1869 թվականը նախապատրաստական շրջան հանդիսացան Փորթուգալյանի՝ մեծ հայրենասերի ազգային հզոր, փոթորկոտ գործունեության ծավալման համար: Մեծանուն ազգասերը պիտի ուզենար հայրենի երկիրը ճանաչել ավելի մոտիկից և գործել գավառահայության շրջանում: Եվ առիթը շատ չուշացավ: 1869 թ. հուլիսին Մ. Փորթուգալյանը մեկնում է Եվդոկիա՝ իր պաշտոնատեղին: Նա այդ ժամանակ ընդամենը 21 տարեկան էր: Վառ հույսերով ու երազներով խանդավառ պատանին մեկնում է գավառ՝ թողնելով մայրաքաղաքային փափուկ կյանքը՝ իր ժողովրդին ծառայելու անշահախնդիր առաքելությամբ:

Եվդոկիայում Փորթուգալյանին հաջողվում է մի քանի համախոհներով կազմակերպել Պոլսի «Անձնուէր» ընկերության տեղական մասնաճյուղը[15]: Սկսվում են կիրակնօրյա դասախոսությունները ու բանավեները: 1869 թ. պատրիարքական գահին բազմած Խրիմյան Հայրիկը օրհնություն և քաջալերական կոնդակ է հղում Եվդոկիայի «Անձնուէր»-ին՝ հանձնարարելով տեղի Առաջնորդ Հակոբ վարդապետ Ճգնավորյանին՝ անձամբ քաջալերել ընկերության անդամներին:

Մ. Փորթուգալյանի կյանքում բախտորոշ նշանակություն է ունենում ծանոթությունը և համագործակցությունը «Մշակի» մեծահռչակ խմբագիր Գրիգոր Արծրունու հետ:

Արծրունին խորապես հետաքրքրվում է Փորթուգալյանով և նրան հրավիրում Թիֆլիս, ուր համատեղ մշակում են «Արարատեան» ընկերության ծրագիրը[16], որով ավելի սերտ է դառնում արևելահայ և արևմտահայ ազգային գործիչների գործակցությունը:

«Արարատեան» ընկերությունը, որը հիմնվել է 1876 թ. ապրիլին, Օրթագյուղի մեջ Ա. Արփիարյանի, Զ. Շիշմանյանի և այլ գործիչների ջանքերով, ընդհանուր ժողովում ընդունում է Փորթուգալյանի բերած առաջարկները և վերջինիս ընտրում իր ատենապետ[17]: Գործունեության կենտրոն է որոշվում Վանը: Գավառում գործելն այն ժամանակ մեծ խիզախություն էր: Բայց Փորթուգալյանը ստանձնում է այդ վսեմ առաքելությունը: 1876 թ. նա մեկնում է Վան՝ ճանապարհին այցելելով Սամսոն, Եվդոկիա, Սեբաստիա, Խարդերդ և Տիգրանակերտ: Ըստ որոշ տեղեկությունների, Վանից ոչ հեռու, Ալյուր գյուղում, 1876 թ. նոյեմբերի 1-ին հիմնում է վարժարան, միաժամանակ ամեն կիրակի բանախոսում քաղաքի Հայկազյան վարժարանում:

Մեծ հայրենասերը մանրամասնորեն ուսումնասիրում է հայրենի եզերքը, կազմում Վան նահանգի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի մասին տեղե-

---

15 Տե՛ս Կ. Սարոաֆեան, Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան վրա, Թեյրութ, 1960 թ., էջ ը:

16 Տե՛ս Լեո, երկ. ժող., 2 հատ., Ե., 1987 թ., էջ 592:

17 Նույն տեղում, էջ 242-243:

կանք. հետագոտում գյուղերի տնտեսական, առողջապահական, նանապարհաարանսպորտային վիճակը: Թուրքական լրտեսների աչքից չվրիպեց Փորթուգալյանի դուռն ազգօգուտ գործունեությունը, և շուտով սկսվեցին հալածանքները:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Փորթուգալյանն անցնում է Թիֆլիս, ուր համագործակցում է Գր. Արծրունու հետ: 1878 թ. նա կրկին վերադառնում է Վան, ուր բացում է իր հռչակավոր Վարժապետանոցը՝ ուսումնական չորս տարվա ծրագրով:

1881 թ. Փորթուգալյանը ետ է կանչվում Պոլիս, հանդիպում Պատրիարքի հետ, հերքում իր դեմ եղած մեղադրանքները և կրկին վերադառնում Վան: Այս անգամ առանց «Միացյալ ընկերության» աջակցության, նա իր սեփական միջոցներով, որոշ չափով նաև Խրիմյան Հայրիկի աջակցությամբ, հիմնադրում է կենտրոնական վարժարանը, որը գոյատևում է մինչև 1885 թվականը: Փորթուգալյանի «կեդրոնականա»-ը հայ դպրության հինավուրց փառքին նոր հավելում տվեց և Վանի ազատամիտ երիտասարդության համար եղավ հայրենասիրական ոգով բրծվելու դարբնոց:

1881-1885 թվականները եղան Փորթուգալյանի գործունեության ամենաբեղուն ու նաև շիկացած տարիները:

Նա Խրիմյանի հետ միասին հասցրեց շատ բան անել, երբ Վասպուրական աշխարհը չէր պարպվել իր զավակներից և դեռևս համիդյան «...հայակեր ֆաղաֆականությունն չէր հասած իր կարմիր կատաղությանն»[18]:

Մ. Փորթուգալյանի «կեդրոնական»-ում ազգային ցավի և արժանապատվության ոգով հոգևոր սնունդ ստացան, աճեցին ու դաստիարակվեցին բազմաթիվ ազատատենչ երիտասարդներ, ազգային հեղափոխականների մի ողջ համաստեղություն, որոնցից շատերը դարձան Արմենական կուսակցության հիմնադիրներն ու համակիրները:

Եվ իրավ է, որ Վասպուրականի ազգային ու կրթական վերածնության այդ փուլում «...Խրիմեան-Փորթուգալեան-Կամսարական կազմեցին երրորդությունը մը, որուն շուրջ սկսաւ խմբուիլ թէ պատրաստ երիտասարդությունը, եւ թէ Փորթուգալեանի շունչի տակ մեծցող դպրոցական նոր սերունդը»[19]:

Վանի մտավոր զարթոնքը մեծապես պայմանավորված էր Փորթուգալյանի և Խրիմյանի անձնուրաց ու խանդավառ գործունեությամբ:

Խրիմյանի և Փորթուգալյանի Վանից հեռանալու պահին արդեն իսկ կար նորահաս սերունդ, որը հայրենասիրական իդեալներով տոգորված, ազատագրական գիտակցությամբ լեցուն, գաղտնի, բայց «...վճռական աշխատանքի լծուած էր կազմակերպելու, զինելու ժողովրդային խաւեր եւ պատրաստելու զայն ազգային իրաւունքներու հետապնդումին ու մարդկայնօրէն ապրելու պահանջատիրութեան»[20]:

---

18 «Գառասուն տարուան աշխատաւորը», էջ 40:

19 Մ. Նաթանեան, Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990 թ., էջ 2:

20 Հայկ. Ուզունեան, Առեւմտահայ Ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնը իր 80-ամեակին, Լոս Անճելըս, 1988 թ., էջ 20:

Թուրքական կառավարության համար այլևս անհանդուրժելի էր Փորթուգալյանի և Խրիմյանի ներկայությունը Վանում, և շուտով Բ. Դռան կարգադրությամբ «Կեդրոնականը» փակվեց: Այն ծանր կորուստ էր Վանի հայության համար, քանի որ այն ժամանակակիցների կողմից համարվում էր Վանում բացված հայկական առաջին բարձրագույն վարժարանը, որը հայ երիտասարդ մտավորական դասի մեջ ծնեց ու զարգացրեց ինքնապաշտպանության և հայրենիքի ազատության ոգին ու գաղափարը:

Այսպիսով, ազգային մեծ գործիչներ Մկրտիչ Փորթուգալյանն ու Մկրտիչ Խրիմյանը կնքահայրը հանդիսացան Վասպուրականի առաջին հեղափոխական մարտական սերնդի, որն արդեն յուրացրել էր «Առանց զենքի չկա հայոց փրկություն» կարգախոսը: Փորթուգալյանի և Խրիմյան Հայրիկի ազատատենչ, ազգային ոգեղեն շնչի ներքո ձևավորված հենց այդ երիտասարդությանն էր վիճակված սկսելու կազմակերպված քաղաքական շարժումը՝ հիմք դնելով առաջին հայ քաղաքական կուսակցության կազմավորմանը:

Հենց այդ երիտասարդներից շատերը, ինչպես արմենականների խիզախ առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, շուտով իրենց կյանքի գնով ևս մեկ անգամ ապացուցեցին «Մահ իմացեալ» պատգամի հարատևող կենսունակությունը՝ խիզախության ու ակնածանքի խորհրդանիշ դառնալով հետագա սերունդների համար:

Վանից Խրիմյան Հայրիկի ու Մկրտիչ Փորթուգալյանի աքսորումը և վանեցիների կողմից նրանց հրաժեշտի արարողությունը վերածվեցին քաղաքական և ժողովրդային ջերմեռանդ ցույցի: Ժողովրդական խանդավառ ալիքի ուղեկցությանն ներքո Խրիմյանը Տարսոնի ճանապարհով, իսկ Փորթուգալյանը՝ Էրզրումի ուղղությամբ թողեցին իրենց այնքան հարազատ ու սիրելի Վանը[21]: Երկու մեծ հայրենասերների գործունեությունը բարձր է գնահատվել հայ ազգային-քաղաքական, մշակութային գործիչների, ինչպես նաև հետագա սերունդների կողմից:

Այսպիսով, հայ ազատագրական շարժման մեծ ռահվիրաների՝ Մ. Փորթուգալյանի և Խրիմյան Հայրիկի հասարակական-քաղաքական բուռն, հզոր ու արդյունավետ գործունեությունը Վանում ստեղծեց ազգային զարթոնքի այն բարենպաստ մթնոլորտը, որը ծնունդ տվեց մի ամբողջ շարք հայրենանվեր գործիչների դաստիարակմանը և Արմենական կուսակցության կազմավորմանը:

---

21 Մ. Նաթանեան, նշվ. աշխ., էջ 4: